ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 10, 1961 Общественные науки

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ԿՈՈՐԴԻՆԱՑԻՈՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋԸ

1961 թվականի հունիսի 27—29-ը Մոսկվայում կայացավ Սովետական Միության արևելագիտական հիմնարկների ներկայացուցիչների առաջին կոորդինացիոն խորհրդակցությունը։ Նրա աշխատանքներին մասնակցում էին մոտ 200 մարդ, որոնք ներկայացնում էին 48 գիտա-հետազոտական կազմակերպություններ և պետական հիմնարկներ։

Խորհրդակցությունը քննարկեց արևելագիտության ներկա վիճակը և նրա հետագա զարգացման խնդիրները, ելնելով գիտական աշխատանքի կոորդինացիայի մասին պարտիայի և կառավարության վերջին որոշումներից։

Խորհրդակցությունում՝ «Սովետական արևելագիտության զարգացումը ՍՄԿՊ XX համագումարից հետո և արևելագիտական հետազոտությունների կոորդինացիայի հարցերը» թեմայով զեկուցմամբ հանդես եկավ ՍՍՌՄ ԳԱ Ասիայի ժողովուրդների ինստիտուտի դիրեկտոր ԳԱ թղթակից-անդամ Բ. Գ. Գաֆուրովը։

Զեկուցման մեջ և ելույթներում նշվեցին սովետական արևելագիտության նվաճումները վերջին տարիների ընթացքում, մասնավորապես այն, որ գիտական աշխատանքներում կենտրոնական տեղ են գրավում ժամանակակից խնդիրները՝ իմպերիալիզմի գաղութային սիստեմի փլուզումը, ազգային ազատագրական շարժումները, Արևելքի անկախ երկրների զարգացման օրինաչափությունները և այլ հարցեր։

Զգալի հաջողություններ կան Ասիայի ժողովուրդների հին, միջնադարյան և նոր պատմության ուսումնասիրության ասպարեզում, ինչպես նաև նրանց գրականագիտության և լեզվաբանության հարցերի մշակման գործում։ Նշված հաջողությունները սովետական արևելագիտությանը հնարավորություն տվեցին 1960 թվականի օգոստոսին, Մոսկվայում կայացած արևելագետների միջազգային 25-րդ կոնգրեսում լինել առաջատար դիրքերում։

Ներկայումս բացի Մոսկվայից և Լենինգրադից արևելագիտական կենտրոններ են ստեղծվել նաև Տաշքենդում, Դուշամբեում, Ալմա-Աթայում, Աշխաբադում, Բաքվում, Թբիլիսիում, Երևանում և այլ վայրերում։ Արևելքի պրոբլեմների ուսումնասիրությամբ են զբաղված ՍՍՌՄ-ի ԳԱ կենտրոնական մի շարք ինստիտուտներ, ռեսպուբլիկաների հասարակական գիտությունների բաժանմունքների տարբեր հիմնարկներ, համալսարաններ և այլն։

Գիտահետազոտական աշխատանքների այսպիսի լայն թափը և նրա հետագա զարգացման գիտական պլանավորումը պահանջում են վերացնել գոյություն ունեցող թերությունները և ավելի լավ կազմակերպել այդ աշխատանքները։ Անհրաժեշտ էր վերջ տալ միևնույն թեմաների զուգահեռ ուսումնասիրություններին, ճիշտ օգտագործել եղած կադրերը, կոորդինացնել հիմնական պրոբլեմների ուսումնասիրության գործը, կենտրոնացնել տարբեր լեզուներով, հատկապես արևելյան լեզուներով կարևոր աշխատությունների հրատարակման գործը։

Խորհրդակցությունը հատուկ ուշադրություն դարձրեց տարբեր պրոբլեմների գիտական մշակման միջոցով գիտական հիմնարկների կողմից քաղաքական և պրակտիկ աշխատանք տանող հիմնարկներին օգնություն ցույց տալու խնդրին։

Ինչպես ընդհանուր, այնպես էլ սեկցիաների նիստերում քննարկվեցին կոորդինացման ենթակա ուղղությունների և պրոբլեմների հետ կապված կոնկրետ միջոցառումներ։

Գործում էին՝ Արաբական երկրների և Մերձավոր ու Միջին Արևելքի, Հնդկաստանի և Հարավային ու հարավ-արևելյան Ասիայի, հեռավոր արևելքի երկրների, ինչպես նաև լեզվաբանության և գրականագիտության սեկցիաները։

Դրանցից առաջիններում խնդիր դրվեց ուսումնասիրել և լուսաբանել հիշյալ երկրների արդի վիճակի հետ կապված մի շարք կարևոր հարցեր, այդ թվում Թուրքիայի և Իրանի կիսագաղութային վիճակի վերադառնալու պատճառները, արաբական ազգերի ձևավորումը և ամրապնդումը.

այդ երկրների կառավարությունների ազգային քաղաքականությունը և փոքրամասնությունների (մասնավորապես քրդերի) վիճակը, սոցիալիզմի երկրների օգնությունը Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդներին, իմպերիալիստական պետությունների, և առանձնապես Գերմանական ֆեդերատիվ ռեսպուբլիկայի ներթափանցման ուժեղացումը այդ երկրներում և մի շարք այլ պրոբլեմներ։

Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Արևելագիտության սեկտորի ներկայացուցիչը իր ելույթում խոսելով կատարված աշխատանքների մասին, նշեց, որ սեկտորը, բացի ժամանակակից ակտուալ թեմաների մշակումից, իր առաջ խնդիր է դրել գիտական շրջանառության մեջ մտցնել հայ գրականությունը և մամուլը, որտեղ մեծ տեղ են գրավում Արևելքին վերաբերող հարցերը։ Հոգորդվեց նաև այն մասին, որ գոյություն ունի մոտ հազար անուն հայատառ թուրքերեն գրականություն և մամուլ, որը սկսած անցյալ դարի կեսերից մինչև առաջին համաշխարհային պատերազմը, լույս է տեսել Օսմանյան կայսրության կենտրոնական մի շարք քաղաքներում և Արևմտյան Հայաստանում։ Ցափազանց կարևոր այս աղբյուրները, ինչպես նաև Մատենադարանում պահվող հայատառ զիշերներն նյութերը, դեռ բոլորովին ուսումնասիրված չեն և սեկտորը արդեն ձեռնարկել է այդ գրականության լրիվ բիբլիոգրաֆիայի կազմելը։

Կոորդինացիոն խորհրդակցությունում սեկտորի ներկայացուցչի բարձրացրած մյուս կարևոր խնդիրը՝ դա քրդագիտության զարգացման և սեկտորի քրդագիտական խմբի բազայի վրա Հայաստանում սովետական քրդագիտության կենտրոն ստեղծելու հարցն էր, որը հավանություն գտավ խորհրդակցության կողմից։

Ելույթներում նշվեցին, որ թույլ են գիտական կապերը Ասիայի ժողովուրդների ինստիտուտի, նրա Լենինգրադի բաժանմունքի ու երկրի արևելագիտական մյուս հիմնարկների միջև, ինչպես նաև վերջիններիս կապերը իրար հետ։ Անհրաժեշտ գտնվեց սիստեմատիկ կերպով կազմակերպել ընդհանուր քննարկումներ, դիսկուսիաներ, խորհրդակցություններ և կոնֆերանսներ առանձին ուղղությունների կամ պրոբլեմների հանգուցային հարցերը քննարկելու համար։

Խորհրդակցությունը որոշեց ստեղծել սովետական արևելագիտության ասպարեզում գիտական հետազոտությունների հետևյալ ուղղությունները.

1. Սոցիալիստական շինարարությունը Ասիայի երկրներում։
2. ՍՍՌՄ և սոցիալիստական լագերի երկրների կապը Ասիայի երկրների հետ։
3. Ասիայի ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը գաղութատիրության դեմ և Ասիայի երկրների զարգացումը ազգային անկախության ուղիով։
4. Բանվորական շարժումը Ասիայի երկրներում։
5. Ագրարային հարցը և գյուղացիական շարժումները Ասիայի երկրներում։
6. Ազգային հարցը Ասիայի երկրներում։
7. Նոր և նորագույն ժամանակների հասարակական և փիլիսոփայական միտքը Ասիայի երկրներում։
8. Միջազգային հարաբերությունները Ասիայում և երկու սիստեմների պայքարը։
9. Սոցիալ-տնտեսական ֆորմացիաների զարգացման և հաջորդման պատմական օրինաչափությունները Ասիայում։
10. Ասիայի ժողովուրդների կուլտուրայի, գրականության և արվեստի պատմությունը և նրանց դերը համաշխարհային կուլտուրայի զարգացման գործում։
11. Աղբյուրների, ակտերի և փաստաթղթերի հրատարակում։
12. Արևելքի ժողովուրդների լեզուների ուսումնասիրում։

Այս տասներկու ուղղություններից ութի ուսումնասիրություններում աշխատակցելու է ՀՍՍՌ ԳԱ Արևելագիտության սեկտորը։ Որոշ ուղղություններում պետք է մասնակցեն Մատենադարանը և Երևանի համալսարանը։

Խորհրդակցությունը որոշեց ընտրել միացյալ գիտական խորհուրդ, որպես արևելագիտական հիմնարկությունների և արևելագետների աշխատանքներին ուղղություն տվող միասնական կազմակերպչական կենտրոն։

Արևելագիտական միացյալ գիտական խորհրդի ֆունկցիաների մեջ մտնելու են՝ վերը բերված հիմնական ուղղությունների և պրոբլեմների ուսումնասիրությունների պրոցեսի պլանավորումը և ղեկավարությունը, դրա հիման վրա գիտահետազոտական աշխատանքների և պատրաստի ուսումնասիրությունների հրատարակության միացյալ պլանների կազմումը և հաստատումը; առանձին գիտական ուղղությունների և պրոբլեմների գծով գիտական ղեկավարության կազմակերպումը։ Միաժամանակ միացյալ գիտական խորհրդին հանձնարարվեց սերտ կապեր հաստատել սոցիալիստական երկրների և այլ պետությունների առաջավոր արևելագետների հետ։

Միացյալ գիտական խորհրդի կարևոր պարտականություններից են նաև կադրերի պատրաստման խնդիրը բարձրագույն ուսումնական հաստատությունների և ասպիրանտուրայի միջոցով, ինչպես նաև լայն մեթոդական և ուրիշ անհրաժեշտ օգնություն (արտասահմանյան գործուղումներ, կադրերի բաշխում, ուսումնական ծրագրերի քննարկում և այլն) կազմակերպելը սովետական բոլոր արևելագիտական հիմնարկություններին և առանձին արևելագետներին։

Խորհրդակցությունը նպատակահարմար համարեց ռեսպուբլիկաների արևելագիտական հիմնարկություններում գոյություն ունեցող մասնագիտական թեքումները գլխավորապես սահմանակից երկրների ուսումնասիրումը և խորհուրդ տվեց հիմնականում պահպանել ընտրած ուղղությունները։

ՀՍՍՌ ԳԱ Արևելագիտության սեկտորը այժմ ուսումնասիրում է Թուրքիայի, Իրանի և Արաբական երկրների պատմությունը, տնտեսությունը և կուլտուրան, այդ երկրների հայ գաղութների պատմությունը, ինչպես նաև քրդագիտության տարբեր պրոբլեմները։ Սակայն Հնդկաստանի հայ գաղութի բավական երկարատև գոյությունը և մեր ժողովուրդների փոխհարաբերությունների հարուստ պատմությունը անհրաժեշտ են դարձնում զբաղվելու նաև հայ-հնդկական հարաբերություններով ու մասամբ Հնդկաստանի պատմությամբ։

Ներկայումս կոորդինացիոն խորհրդակցությունից հետո, որպես հրատապ խնդիր, ռեսպուբլիկայում արևելագիտությամբ զբաղվող բոլոր հիմնարկների առաջ ծառանում է փոխադարձ համագործակցության և կոորդինացիայի անհրաժեշտությունը։

Սովետահայ գիտնականները մեծ հնարավորություններ ունեն ակտիվ կերպով մասնակցելու սովետական արևելագիտության զարգացման դժվարին, բայց պատվավոր գործին։

Հ. ԻՆՃԻԿՅԱՆ